метров с точки зрения, например, параллельной работы с ЭС сопредельных государств, тем более при наличии АЭС. Живучесть тесно связана с конкретными условиями функционирования энергосистемы, причем, совершенно обязательно наличие каких-либо аварийных возмущений. Отметим, что практически ни в одной работе не приведены обобщающие подходы к оценке живучести, в то время, как решение комплекса задач, связанных с развитием методологической и алгоритмической базы для ее изучения, представляет крупную научно-техническую проблему, имеющую важное значение для управления функционированием и развитием энергосистемы. Решение проблемы сопряжено с трудностями, связанными с комплексной оценкой живучести, включающей статическую и динамическую устойчивость, надежность и безопасность работы ЭС в целом и отдельных ее элементов, бесперебойность и качество электроснабжения и т.п. С учетом этого более удачным является используемое в технике определение живучести как способности системы сохранять свойства, необходимые для выполнения требуемых функций, при наличии воздействий, не предусмотренных условиями нормальной эксплуатации [1]. Недостатком является то, что система может не сохранить свои свойства и при наличии предусмотренного воздействия. Обобщая вышеизложенное, предлагается следующее определение: живучесть — это способность системы противостоять недопустимым изменениям параметров своего функционирования.

В такой постановке задача определения живучести решается в рамках задаваемых: объекта исследования, факторов воздействия и критериев живучести.

При этом, объект исследования — это объект, влияние параметров функционирования которого на живучесть выбрано для рассмотрения. Чем больше задано элементов объекта исследования, тем полнее можно определить живучесть. Фактор воздействия — это воздействие (в том числе внешнее) на объект исследования, приводящее к каким-либо изменениям параметров его функционирования. И наконец, критерий живучести — это параметр функционирования объекта исследования, значение которого необходимо сохранять в допустимых пределах.

Исходя из вышеизложенного, разработана методика расчета численного значения живучести с применением матричной и булевой алгебры и теории вероятностей. Суть метода сводится к заполнению некоторой прямоугольной матрицы отклика F , отражающей состояние объекта исследования при действии различных факторов воздействия на ее элементы f_{ij} , которые являются Булевыми функциями и определяются по формуле:

$$f_{ij} = f_{ij} \cap (R_{i1} \cup R_{i2} \cup \dots \cup R_{im} \cup \dots \cup R_{jk})$$

$$i = 1, 2, \dots, n; j = 1, 2, \dots, m; l = 1, 2, \dots, k$$

где n — количество элементов объекта исследования; m — количество факторов воздействия; l — количество критериев живучести; f_{ij} — признак допустимости существования j -го фактора воздействия в i -ом элементе объекта исследования; R_{il} — признак нарушения допустимых пределов l -ого критерия живучести при наличии j -ого фактора воздействия в i -ом элементе объекта исследования.

Как Булевы переменные f_{ij} , l_{ij} и R_{jk} могут принимать два значения — 1, если утверждение истинно и 0 — в противном случае. Далее, путем ряда алгебраических действий и преобразований матрицы F рассчитывается вероятностная "общееобъектная живучесть" P_{sys} :

$$P_{sys} = 1 - \frac{\sum_{i=1}^n \sum_{j=1}^m f_{ij}}{\sum_{i=1}^n 1} \equiv 1 - \frac{\sum_{i=1}^n \sum_{j=1}^m f_{ij}}{\sum_{i=1}^n 1}$$

где d_i, g_i — величины, обратно пропорциональные соответственно количеству допустимых факторов воздействия в i -ом элементе и количеству элементов, где допустим j -ый фактор воздействия.

Очевидно, что чем больше значение $P_{эз}$, тем меньше управляющих воздействий необходимо произвести для введения параметров ЭС в допустимую область функционирования.

ВЫВОДЫ

1. Дано обобщенное определение живучести системы, позволяющее применить это понятие к любым условиям функционирования энергосистемы.
2. Разработана методика численной оценки живучести на основе Булевой и матричной алгебры и теории вероятностей.

ЛИТЕРАТУРА

1. Китулин В.Г. Надежность энергетических систем: Учеб. Пособие для электро-энерг. спец. вузов. — М.: Высш. шк., 1984. — 256 с., ил.
2. Портной М.Г., Рабинович Р.С. Управление энергосистемами для обеспечения устойчивости. — М.: Энергия, 1978, 352 с. ил.
3. Надежность и эффективность в технике: Справочник: в 10 т. / Ред. совет: Авдуевский В.С. (пред.) и др. — М.: Машиностроение, 1986. — (В пер.). Т.1: Методология. Организация. Терминология/Под ред. Рембезы А.И. — 224 с.: ил.

110 կԿ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ԶՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԼԵՆԵՐԳԻԱՅԻ ԿՈՐՈՒՄՏԵՆԵՐԻ ԶԱՇՎԱՐԿ

*Լ. Եղիազարյան, Վ. Սահակով, Վ. Սաֆարյան, Վ. Գամրոլյան
/Էներգետիկայի ինստիտուտ/*

Էլեկտրաէներգիայի հաղորդումը աղբյուրներից սպառողներին, կերպափոխումը և բաշխումը անխուսափելիորեն ուղեկցվում են էլեկտրաէներգիայի ծախսերով (կորուստներ): Էլեկտրաէներգիայի կորուստների որոշման խնդիրը, բացի տեխնիկա-տնտեսական նշանակությունից, ունի նաև լուրջ սոցիալական նշանակություն:

Այս խնդրի հրատապությունը ընդգծվում է հատկապես շոկայական տնտեսավարման պայմաններում, քանի որ կորուստների որոշումը հնարավորություն է տալիս իրականացնել ցանցերի տարբեր լարման մակարդակների միջև էլեկտրաէներգիայի հաշվեկշիռների կազմումը, ցանցային մասնաճյուղերի միջև էլեկտրաէներգիայի հոսքերի որոշումը, տարանցիկ հոսքերից առաջացրած կորուստի որոշումը, ցանցի առավելագույն կորուստներով տեղամասերի բացահայտումը և կորուստների նվազեցման միջոցառումների մշակումը և այլն:

Էլեկտրաէներգիայի տեխնիկական կորուստների որոշման խնդիրը բերվում է ցանցի հաստատված ռեժիմի հաշվարկին, որի արդյունքում որոշվում են ցանցի հանգույցների լարումները, ճյուղերի հոսանքները, հզորության և էներգիայի հոսքերը և կորուստները ցանցի տարբերում (գծեր, երկփաթույթ և եռափաթույթ տրանսֆորմատորներ, ռեակտորներ):

Ցանցի հաստատված ռեժիմի հաշվարկը իր հերթին բերվում է ոչ գծային հանրահաշվական հավասարումների համակարգի լուծմանը, որի կարգը հավասար է դիտարկվող ցանցի հանգույցների քանակի կրկնապատիկին: Վերջինս հնարավոր է իրագործել, օգտագործելով ժամանակակից համակարգչային տեխնիկա և կիրառական մաթեմատիկայի համապատասխան մեթոդներ:

110 կԿ և բարձր և 0,38 - 6 (10) - 35 կԿ ցանցերի առանձնահատկություններն ըստ տեղաբաժանական (տոպոլոգիական) կառուցվածքի և նախնական ինֆորմացիայի տրաման ձևի, պահանջում են տարբեր մոտեցումներ նրանց հաստատված ռեժիմների մաթեմատիկա-

կան մոդելների ստեղծման և լուծման գործընթացում: Բարձր լարման և բաշխիչ ցանցերի առանձնահատկություններից անհրաժեշտ է նշել հետևյալը.

ա) Բաշխիչ ցանցերը չեն պարունակում կոնտուրներ, ուստի որպես հաշվարկային միավոր այստեղ հանդես է գալիս առանձին ուղղությունը, որի հաշվարկը կատարվում է մնացած ուղղություններից անկախ:

բ) Բարձր լարման ցանցերում առկա են բազմաթիվ կոնտուրներ, ուստի հաստատված ռեժիմի հաշվարկը այստեղ կատարվում է ամբողջ ցանցի համար որպես մեկ միասնական միավորի:

գ) Բաշխիչ ցանցերում հաշվարկը կատարվում է ամսական միջինացված հզորություններով, որոնց դիմադրական հաշվի է առնվում անհամաչափության գործակիցներով:

դ) Բարձր լարման ցանցերում հաշվարկը կատարվում է հաշվարկային ժամանակահատվածի յուրաքանչյուր ժամվա համար ըստ հզորությունների օրական գրաֆիկների:

Էներգետիկայի ինստիտուտում մշակված է ալգորիթմ և համալիր ծրագիր 110 կԿ և բարձր լարման ցանցերի տվյալների բազայի ստեղծման, ճշգրտման, դիտման, ինչպես նաև հաստատված ռեժիմների, տեխնիկական և առևտրային (չափազիտական և չիմնավորված) կորուստների, տարբեր լարման մակարդակների միջև էլեկտրաէներգիայի հաշվեկշիռի հաշվման համար [1]: Հայաստանի 110 կԿ և բարձր լարման ցանցի տվյալների բազան իր մեջ ներառում է 400 հատ 110-220 կԿ լարման օղային էլեկտրահաղորդման գիծ, 80 երկփաթույթ տրանսֆորմատոր, 220 հատ եռափաթույթ տրանսֆորմատոր, 60 հատ գեներատորային հանգույց, 600 հատ բեռային հանգույց իրենց նախնական, հաշվարկային և ռեժիմային պարամետրերով:

Յուրաքանչյուր հաշվարկային ժամանակահատվածի համար մուտք են արվում հանգույցների ակտիվ ինֆորմացիան հետևյալ տեսքով.

ա) Գեներատորային հանգույցներ.

- ակտիվ և ռեակտիվ էներգիայի ամսական արտադրանքը,
- ակտիվ և ռեակտիվ էներգիայի օրական արտադրանքը,
- P, Q տիպի հանգույցների համար տրվում է ակտիվ և ռեակտիվ հզորությունների օրական գրաֆիկները ըստ ժամերի,
- բազիսային հանգույցի համար տրվում է հանգույցի, լարման մոդուլի և փուլի ժամային գրաֆիկները,
- P, U տիպի հանգույցների համար տրվում է ակտիվ հզորության և լարման մոդուլի ժամային գրաֆիկները,


բ) Բեռային հանգույցներ.

- ակտիվ էներգիայի ամսական արտադրանքը,
- P, Q տիպի հանգույցների համար տրվում է ակտիվ և ռեակտիվ հզորությունների ժամային գրաֆիկը,
- P, cos տիպի հանգույցների համար տրվում է ակտիվ հզորության հարաբերական և հզորության գործակցի ժամային գրաֆիկները:

Հաշվարկային ժամանակահատվածի յուրաքանչյուր ժամվա համար կատարվում է ցանցի հաստատված ռեժիմի հաշվարկ, որի արդյունքում որոշվում է հաշվարկային ժամվա ռեժիմային պարամետրերը, այդ թվում նաև ակտիվ և ռեակտիվ հզորության տեխնիկական կորուստները ցանցի տարբերում, որոնց գումարով հաշվարկային ժամանակահատվածի համար ստանում ենք ակտիվ և ռեակտիվ էներգիայի տեխնիկական կորուստները ցանցի տարբերում և ողջ ցանցում:

110 կԿ և բարձր լարման ցանցի փոխադրման սխեման, որի համար կատարվում է ժամվա հաստատված ռեժիմի հաշվարկը, պարունակում է, 900 հանգույց (1800 հավասարում), 1200 ճյուղ, 300 անկախ կոնտուր: Մեկ ռեժիմի հաշվարկը Pentium - 3 450 ՄՀ համակարգչի վրա $t_{\text{հ}} = 0,0001$ ճշտությամբ տևում է մոտավորապես 1/2 վրկ.: Եթե հաշվի առնենք, որ հաշվարկային ժամանակահատվածի յուրաքանչյուր ժամային հաշվարկի ընթացքում կատարվում է մոտ 10 անգամ ռեժիմի հաշվարկ, ապա ամսական հաշվարկը տևում է մոտ 1 ժամ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ցանցում բեռնվածքների համաչափ փոփոխություն ապահովելու պայմանով, ցանց մուտք գործող էներգիայի որոշակի քանակի դեպքում ($\Delta W_{\text{ց}}$) ցանցում տեխնիկական կորուստի տոկոսային մեծությունը ստանում է նվազագույն արժեք (նկ. 1):



Նկ. 1. Տեխնիկական կորուստի տոկոսաչափի կախվածությունը մուտքային էներգիայից:

Համաձայն նկ.1-ում բերված գրաֆիկի, ցանցի մուտքային էներգիայի աճման դեպքում հնարավոր է տեխնիկական կորուստների տոկոսաչափի ցանկացած շեղում (նվազում կամ աճ):

110 կՎ և բարձր լարման ցանցերում, բացի տեխնիկական կորուստից, հաշվարկվում են նաև առևտրային կորուստները, որոնք բաղկացած են չափագիտական (հիմնավորված) և չհիմնավորված բաղադրիչներից [1]:

Չափագիտական կորուստների հաշվարկման համար օգտագործվում են չափման տրակտի (հոսանքի տրանսֆորմատոր, լարման տրանսֆորմատոր, հաշվիչ) ճշտության դասերը, անկյունային սխալանքը և այլ գործոններ [1]:

Տեխնիկական և չափագիտական կորուստների գումարով որոշվում է տեխնոլոգիական կորուստները ցանցում:

Էներգետիկայի ինստիտուտում մշակված համալիր ծրագրով յուրաքանչյուր ամսվա համար կատարվում է Հայաստանի 110 կՎ և բարձր լարման ցանցի ռեժիմների, կորուստների հաշվարկ և հաշվեկշիռների կազմում, որոնց վերլուծությամբ մշակվում են ցանցի ռեժիմների լավարկման և կորուստների նվազեցման միջոցառումներ:

Գրականություն

1. 110 կՎ և բարձր լարման ցանցերում էլեկտրաէներգիայի կորուստների հաշվարկի հրահանգ, Երևան, 2000 թ.:

0.38 – 35 կՎ ԱՐՄԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Ա. Առաքելյան, Ե. Աթաբեկյան, Լ. Եղիազարյան, Ռ. Չաքարյան, Զ. Հարությունյան, Գ. Ղազարյան, Ա. Յուզբաշյան, Վ. Սաֆարյան /Էներգետիկայի ինստիտուտ./

Հայաստանի 4 բաշխիչ էլեկտրացանցային բաժնետիրական ընկերությունները 2000թ.-ի դրությամբ ընդգրկում են էներգահամակարգի 35-6(10)-0.38 կՎ լարման ողջ ցանցերը, բացառությամբ սպառողներին պատկանող այդ լարումների էլեկտրատեղակայանքները:

Բաշխիչ էլեկտրացանցերի և դրանց սնող 110-220 կՎ ցանցերի սահմանազատումը կատարվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ընկերության 110-220/35-6(10) կՎ ենթակայաններում:

Ինչպես հայտնի է էլեկտրաէներգիայի տեղափոխման, կերպափոխման և բաշխման տեխնոլոգիական պրոցեսները անխուսափելիորեն ուղեկցվում են էլեկտրաէներգիայի ծախսով (տեխնոլոգիական ծախս կամ կորուստ):

Էլեկտրաէներգիայի վաճառող-գնորդ (մատակարար-սպառող) փոխադարձ ֆինանսական հաշվարկներում առանցքային նշանակություն ունեն էլեկտրացանցում էլեկտրաէներգիայի կորուստների ցուցանիշները:

Էլեկտրական ցանցերում էլեկտրաէներգիայի կորուստների համար Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ են գտնվում հետևյալ հասկացողությունները.

1. Էլեկտրաէներգիայի չափված կորուստ ($\Delta W_{\text{լափ}}$):
Էլեկտրական ցանց (կամ նրա տեղամաս) մուտք գործած (W_0) և դուրս հաղորդված (W_6) (այդ թվում բաժանորդներին) էլեկտրաէներգիայի տարբերություն.

$$\Delta W_{\text{լափ}} = W_0 - W_6 \quad (1)$$

2. Փաստացի (բնական) կորուստ ($\Delta W_{\text{ֆ}}$):
Էլեկտրական ցանցում տեխնոլոգիական պրոցեսներով և հաշվարկի սարքերի փաստացի սխալանքով պայմանավորված անխուսափելի կորուստի, որի չափը որոշվում է ցանցի մաթեմատիկական մոդելով հաշվետու ժամանակահատվածում մատակարարված էլեկտրաէներգիայի քանակով և էլեկտրական ցանցի և չափիչ համալիրների տեխնիկական և ռեժիմային պարամետրերի փաստացի վիճակի գնահատված արժեքներով, ինչպես նաև իրավական նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանող փաստաթղթերով հիմնավորված կորուստի գումարային մեծություն.

$$\Delta W_{\text{ֆ}} = \Delta W_{\text{տ}} + \Delta W_{\text{լափ}} + \Delta W_{\text{առ}} \quad (2)$$

3. Էլեկտրաէներգիայի չհիմնավորված կորուստ ($\Delta W_{\text{ն}}$):
Չափված և փաստացի (բնական) կորուստների տարբերություն.

$$\Delta W_{\text{ն}} = \Delta W_{\text{լափ}} - \Delta W_{\text{ֆ}} \quad (3)$$

4. Էլեկտրաէներգիայի տեխնիկական կորուստ ($\Delta W_{\text{տ}}$):
Էլեկտրական ցանցերով էլեկտրաէներգիայի հաղորդման (բաշխման) պրոցեսի կատարման համար ծախսվող ակտիվ էներգիայի այն քանակն է, որը նրա տարբերում անխուսափելիորեն վերածվում է էներգիայի այլ տեսակների (ջերմային, ճառագայթային և այլն):

5. Էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստ ($\Delta W_{\text{տխ}}$):
Էլեկտրական ցանցում տեխնոլոգիական պրոցեսներով և հաշվարկի սարքերի փաստացի սխալանքով պայմանավորված անխուսափելի կորուստ, որի չափը որոշվում է ցանցի մաթեմատիկական մոդելով հաշվետու ժամանակահատվածում մատակարարված էլեկտրաէներգիայի քանակով և էլեկտրական ցանցի և նրա չափիչ համալիրների տեխնիկական և ռեժիմային պարամետրերի փաստացի վիճակի գնահատված արժեքներով:

6. Էլեկտրաէներգիայի չափագիտական կորուստ ($\Delta W_{\text{չ}}$):
Էլեկտրական ցանցում էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական և տեխնիկական կորուստների տարբերություն.

$$\Delta W_{\text{չ}} = \Delta W_{\text{տխ}} - \Delta W_{\text{տ}} \quad (4)$$

7. Էլեկտրաէներգիայի առևտրային կորուստ ($\Delta W_{\text{առ}}$):
Էլեկտրական ցանցում չափագիտական և չհիմնավորված կորուստների գումար.

$$\Delta W_{\text{առ}} = \Delta W_{\text{չ}} + \Delta W_{\text{ն}} \quad (5)$$

8. Էլեկտրաէներգիայի նորմատիվ կորուստ (ΔW_6):
Էլեկտրական ցանցում էլեկտրաէներգիայի տեխնիկական կորուստի, իրավական նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանող փաստաթղթերով հիմնավորված կորուստի և չափագիտական կորուստի թույլատրելի սահմանային արժեքի գումար.

$$\Delta W_6 = \Delta W_{\text{տ}} + \Delta W_{\text{առ}} + \Delta W_{\text{չ}} \quad (6)$$

որտեղ
 $\Delta W_{\text{թ}}$ - էլեկտրաէներգիայի չափագիտական կորուստի թույլատրելի սահմանային արժեք,

ΔW_{60} - նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանող փաստաթղթերով հիմնավորված էլեկտրատեղակայի կորուստ:

Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտում մշակված է բաշխիչ էլեկտրա-ցանցերում էլեկտրատեղակայի հաշվարկների և վերլուծության համակարգչային համալիր ծրագիրը: Ծրագիրը հնարավորություն է տալիս բաշխիչ էլեկտրացանցերում կատարել ռեժիմների, տեխնոլոգիական (այդ թվում տեխնիկական և չափագիտական) կորուստների հաշվարկ, ինչպես նաև ստանալ տարրեր էլեկտրատեղակայի հաշվեկշիռներ ցանցի ցանկացած հատվածներում և ողջ ցանցում:

Բաշխիչ ցանցերը ըստ ռեժիմային և սխեմայական առանձնահատկությունների և հաշվարկների ելակետային տվյալների հա-գեցվածության բաժանվում են 35 կՎ, 6-10 կՎ, և 0.38 կՎ ցանցերի:

Եզված լարման ցանցերում էլեկտրամատակարարման հաստատված ռեժիմի փոխարինման սխեմաները կոնսուրներ չեն պարունակում, հետևաբար, որպես հաշվարկային միավոր ընդունվում է ցանցի առանձին սնման ուղղությունը, որտեղ կորուստների հաշվարկը կատարվում է մնացած ուղղություններից անկախ:

Էլեկտրամատակարարման սխեման համակարգչային բազայում ներկայացվում է էլեկտրասնման ուղղության (տեղամասի) կառուցվածքով (տոպոլոգիայով), դրա ճյուղերի հաջորդական գրառմամբ ըստ տեղաբանական դիրքի: Համակարգչային տվյալների բազայում կազմվում է 0.38- 35 կՎ ցանցերի յուրաքանչյուր ուղղության (ծառի) հանգույցների ցանկը, հանգույցներում միացված բոլոր առաջնային շղթայի տարրերի գրառումով:

Բաշխիչ ցանցերի տվյալների համակարգչային բազայի ցուցանիշները տրված են աղ 1-ում:

h/h	Ցանցային լարումը, կՎ	Սնման ուղղություն, հատ	Հանգույցների թիվ, հատ
1	35	170	616
2	6-10	1608	16566
3	0.38	31849	159186

Յուրաքանչյուր հաշվարկային ժամանակահատվածի (ամիս) համար որպես ելակետ օգտագործվում են էլեկտրական ցանցի պարամետրերի և էլեկտրահաշվիչներով որոշված էլեկտրատեղակայի քանակի մասին տվյալները (ակտիվ էներգիայի հաշվիչների ցուցմունքները):

Էլեկտրատեղակայի «նյութական պատասխանատվության» ինստիտուտի ներդրումից հետո հաշվարկները կատարվում և արդյունքները ներկայացվում են ըստ նյութական պատասխանատուների: Յուրաքանչյուր հաշվետու ամսում կատարված հաշվարկների արդյունքները ներկայացվում են բաշխիչ ընկերություններին, որոնք օգտագործվում են էլեկտրատեղակայի կորուստների հաշվետվության մեջ, ինչպես նաև էլեկտրատեղակայի կորուստների պլանավորման և էլեկտրական ցանցերի կորուստաբեր տարրերի բացահայտման և կորուստների նվազեցման միջոցառումների մշակումների մեջ:

КАЧЕСТВЕННАЯ И КОЛИЧЕСТВЕННАЯ ОЦЕНКА ПОТЕНЦИАЛА ЭНЕРГОСБЕРЕЖЕНИЯ

А.Харазян
Инст. Энергетика/

Задача повышения энергоэффективности электроэнергетики является одной из важнейших. В различных сферах электроэнергетики задачи повышения энергоэффективности преследуют различные цели: в сфере производства основная цель заключается в снижении потребления первичных ресурсов на единицу отпущенной продукции, в сфере передачи и распределения - в снижении потерь энергии в электрических сетях, в сфере потребления - в снижении расходов электроэнергии на производство единицы продукции.

Однако, в конечном счете, решение всех этих задач приводит к одному общесистемному эффекту - снижению расходов первичных энергоресурсов на электростанциях. Таким образом, повышение энергоэффективности приводит к экономии энергоресурсов, т.е. является источником сбережения энергоресурсов. Количественным показателем такого энергосбережения является объем высвобожденных первичных ресурсов, которые обладают рядом бесспорных преимуществ:

- энергосбережение в количественном отражении является собственным (местным) энергоресурсом, способствующим повышению энергетической независимости государства;
- энергосбережение с экологической точки зрения является абсолютно "чистым" энергоресурсом и, в связи с этим, может придать любому экономически оправданному проекту большую финансовую привлекательность.
- энергосбережение является источником энергоресурсов, который не облагается различными налогами.

Повышение энергоэффективности и сбережение ресурсов - естественное стремление любых субъектов ЭЭС в условиях конкурентных рыночных отношений, поскольку приводит к увеличению прибыли.

Для технической, экономической и финансовой оценок того или иного проекта по энергосбережению, необходимо прежде всего иметь представление о возможностях энергосбережения, т.е. о его потенциале. Поскольку количественная оценка энергосбережения в конечном счете сводится к понятию первичных энергоресурсов, то разумно было бы прибегнуть к тем критериям, которые используются для оценки классических ресурсов. В системе оценок потенциалов водных и топливных ресурсов в основном речь идет о трех категориях: теоретический, технически доступный и экономически доступный:

- Под теоретическим потенциалом подразумевается максимально возможный объем ресурса, который может быть использован в идеальных условиях;
- Технически доступный потенциал определяется возможностями современной техники по использованию водных ресурсов или извлечению топливных ресурсов;
- Экономически доступный потенциал является той частью технически доступного, использование которого экономически оправдано.

Эта система оценки потенциалов классических ресурсов может быть использована и для оценки потенциала энергосбережения.

На характерном примере конденсационной парогенераторной ТЭС можно дать интерпретацию этой системы оценок. Основными критериями эффективности ТЭС являются ее КПД или удельный расход условного топлива, которые взаимосвязаны следующими отношениями:

$$b_y = 0,123/\eta_{ТЭС}, \text{ кг у.т./кВтч. } b_{y,н} = 0,086/\eta_{ТЭС}, \text{ кг н.э./кВтч. } (1)$$

Очевидно, теоретический предел эффективности преобразования тепла топлива в электроэнергию определяется КПД цикла Карно, т.е. когда $\eta_{ТЭС} = \eta_k$. При этом, все остальные КПД, как-то котла, электрогенератора и пр., принимаются 100%. Со временем КПД η_k может расти, поскольку изменяются параметры пара по мере развития энергетики. На рис. 1 эта тенденция отражена лишь качественно.

Реальные ТЭС работают, как правило, по циклу Ренкина, КПД которого, при равных параметрических условиях, ниже: $\eta_p < \eta_k$. Уровень технического развития определяет также величины КПД оборудования ТЭС, которые ниже 100%. Соответствующая кривая на рис.1 характеризует изменение η_p во времени.

Динамика фактической эффективности конкретной ТЭС отражена соответствующей кривой, которая, в отличие от предыдущих, имеет убывающий характер, т.к. по ходу эксплуатации, эффективность оборудования обычно снижается.

Теоретический потенциал энергосбережения на ТЭС определяется отрезком между кривыми η_k и $\eta_{\text{ф}}$, т.е. отрезком $\Delta\eta_{\text{кф}}$. Очевидно, в топливном выражении этот потенциал может быть оценен следующим образом:

$$\Delta B_T = 0,123 \cdot \Delta\eta_{\text{кф}} \cdot E_{\text{год}} / \eta_{\text{ф}} \cdot (\eta_{\text{ф}} + \Delta\eta_{\text{рф}}), \quad (2)$$

где $\Delta\eta_{\text{кф}} = \eta_k - \eta_{\text{ф}}$ - разница между теоретическим и фактическим КПД ТЭС (см. рис.1).

$\eta_{\text{ф}}$ - фактический (действительный) КПД ТЭС,

$E_{\text{год}}$ - годовой отпуск электроэнергии со станции.

Аналогичным образом можно определить технически и экономически доступные потенциалы. Необходимо только в выражении (2) заменить $\Delta\eta_{\text{кф}}$ соответствующими значениями $\Delta\eta_{\text{рф}}$ и $\Delta\eta_{\text{эф}}$.




Рис. 1. К понятиям теоретического и доступных потенциалов.

Таким образом, освоение лишь части технически доступного потенциала энергосбережения может быть экономически оправдана.

Такие понятия можно также отнести к любому энергетическому объекту, лишь с той разницей, что в каждом конкретном случае оценка потенциалов будет оперировать конкретным параметром (потери мощности или энергии, механические, электрические КПД и пр.)

ՉԱՄՊԱԿՏ ԽՄԲԵՐՈՎ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԻՆՂՈՎԿՑԻՈՆ ՅԱՇՎԻՉՆԵՐԻ ՓՈՒՍԱԴՐՈՒՄԸ ԲԱԶՄԱՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՅԱՇՎԱՐԿԻ

Ս. Արեյան, Ռ. Արեյան
(Լազերային տեխնիկա ՓԲԸ)

Յայտնի է, որ ներկայումս էլեկտրաբաշխիչ ցանցերում խոշոր պորբեմներից մեկն է բազմասակագնային հաշվարկի կազմակերպումը: Այն պահանջում է զգալի միջոցներ միասակագնային ինդուկցիոն հաշվիչները, որոնք կազմում են Յայաստանի Յանրապետության հաշվիչների ընդհանուր քանակի մեծ մասը, ժամանակակից էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչներով փոխարինելու համար: Այդպիսի միջոցների պակասը, ինչպես մատակարարողի, նույնպես և սպառողի մոտ հարցի լուծումը երկարաձգում է տարիներով:

Սույն առաջարկը նպատակ ունի, օգտագործելով, գուցե և առաջիկա մի քանի տարվա հաշվով, ինդուկցիոն հաշվիչների ներկա պարկը և դրանց, մեծ մասամբ, խմբակային կոմպակտ տեղադրվածությունը (առանձնապես քաղաքներում), դրանցով կազմակերպել բազմասակագնային հաշվարկ միջոցների մի քանի տասնյակ անգամ փոքր ներդրումով և շատ կարճ ժամկետներում:

Առաջարկի տեխնիկական հիմքն են հանդիսանում հետևյալ ուսումնասիրված փաստերը
- այդ հաշվիչները (ինչպես միաֆազ, այնպես էլ եռաֆազ) մեծ ճշտությամբ պահպանում են սկավառակի պտտման արագության (հզորության) և լարման փաթույթին տրվող լարման միջև ուղղագծային կապը անգամ լարման մոտ երկու անգամ նվազ արժեքի դեպքում, ընդ որում վերջին դեպքում լրացուցիչ սխալները չեն գերազանցում + 2% [1,2]
- հաշվիչների լարման և հոսանքի (ֆազային) սեղմակները՝ դրանց ավանդական օգտագործման դեպքում, միացած են միջակապով, որն ըստ ստանդարտի պահանջի անջատովի է [3]:

Վերը նշված փաստերը հնարավորություն են տալիս հաշվիչների կոմպակտ տեղադրված խմբերում անջատելով լարման մուտքերը ֆազայինից, դրանց միացնելով իրար ըստ ֆազերի և այդ խմբերին ցածր սակագնի ժամերին տալով համապատասխան ֆազի լարումից այնքան անգամ փոքր լարում, որքան անգամ ցածր սակագինը փոքր է ամենամեծից, ապահովել ցածր սակագնի անուղղակի հաշվառումը վճարը միշտ կատարելով ամենաբարձր ցերեկային սակագնով:

Լարման ֆազային իջեցուցիչների ամենահարմար տեսակը ավտոտրանսֆորմատորն է: Այդ ռեժիմում լարման փաթույթների ծախսած լրիվ հզորությունը չի անցնում 3 ՎԱ-ից, հետևաբար, օրինակ, մեկ ֆազին միացած 10 լարման փաթույթների ընդհանուր հզորությունը չի անցնում 30 ՎԱ-ից, որի շնորհիվ փոքր են ավտոտրանսֆորմատորի գաբարիտները:

Փոխանջատումները կարող են կատարվել մեկ ռելեի միջոցով (օրինակ PII-21 տիպի), որը ղեկավարվում է քայների կողմից: Վերջինս պարզագույն էլեկտրոնային սալի է:

Վերը նշվածից հետևում է, որ սարքը շատ պարզ է կառուցվածքով, զրավում է մոտ 1 հաշվիչի ծավալ և կարող է տեղադրվել հաշվիչի տեղում ղեկավարելով մոտ 30 հաշվիչներ: Կղեկավարվեն նաև եռաֆազ հաշվիչները, եթե այդպիսիք կան:

Ինչ վերաբերում է նրան, որ հաշվիչի ցուցմունքը ներկայացնում է «բերված 1-ին սակագնին կվտծ» և սպառումը չի տարաբաշխված ըստ սակագների, ապա անհրաժեշտության դեպքում կարելի է տեղադրել ընդհանուր (օրինակ, շենքի, խմբի) բազմասակագնային հաշվիչ սպառած ընդհանուր քանակը ըստ սակագների տարաբաշխելու նպատակով: Առաջարկի զգալի արդյունավետությունը ներկայացնենք հետևյալ մոտավոր հաշվումներով:

- Ընդունենք
 - մեկ միջին սպառողի ամսական սպառումը 240 կվտծ
 - երկսակագնային ռեժիմ I ժ. 7.00 - 23.00 : 25 դրամ
 - II ժ. 23.00 - 7.00 - 15 դրամ
 - II սակագնով մեկ սպառողի սպառումը ~ 240:3=80 կվտծ
 - բազմասակագնային հաշվիչի գինը՝ 24000 դրամ:
- Յաշվենք, քանի ամսում կփոխհատուցվի բազմասակագնային հաշվիչի գինը, այսինքն, քանի ամսից հետո դրա շահագործումը կդառնա շահավետ:
 - 1 կվտծ-ում տնտեսումը՝ 25-15 = 10 դրամ
 - 1 ամսում տնտեսումը՝ 80x10 = 800 դրամ
- Փոխհատուցելիությունը 24000 : 800 = 30 ամիս, 2.5 տարի, որը զգալի մեծ թիվ է: Լույնիակ եթե II ռեժիմով սպառումը = 120 կվտծ, ապա դժվար չի հաշվել փոխհատուցումը կլինի ~1.7 տարի հետո:

2. Ըստ առաջարկի, պետք է լրացուցիչ սարքավորում տեղադրվի հաշվիչների տուփերում: Ընդունենք հաշվիչների քանակը 15:
Ըստ մոտավոր հաշվումների, սարքի գինը չի գերազանցի 15000դրամը:
Լրացուցիչ ծախսերը 1 սպառողի հաշվով՝ 15000 : 15 = 1000 դրամ:
Փոխհատուցելիությունը՝ 1000 : 800 = 1,25 ամիս:

3. Յաշվումներից պարզ է, որ արդյունավետությունը զգալի է:

Սպառողները, վճարելով անհամեմատ փոքր (հաշվիչի գնի համեմատ՝ 20-30 անգամ) գումար, որը փոխհատուցվում է հաշված ամիսներում (1-2, ի տարբերություն հաշվիչ գնելու դեպքի՝ 1.5-2 տարի) ևս պահովվում են բազմասակագնային հաշվառքով էլեկտրա-

էներգիայով: Այդ պատճառով էլ այդպիսի սարքավորման ներդրումը լիովին ընդունելի է բնակչության կողմից: Ստավոր հաշվումներով 33 տարածքի բնակելի շենքերում առաջարկ կարելի է ներդնել հաշված ամիսների ընթացքում:

Առաջարկն արտոնագրված է «Հայարտոնագրի» կողմից, որպես օգտակար մոդել [4]:

Առաջարկի օգտագործումը, համենայն դեպս մինչև բազմասակազմային հաշվիչների մասսայական տեղադրումը, որն ամենայն հավանականությամբ, կտևի ոչ թե ամիսներ, այլ տարիներ, շահավետ է բնակչությանն ու պետությանը, այսինքն հասարակականորեն օգտակար է:

1. Вострокнутов Г. "Электрические счетчики и их эксплуатация", М., Л., 1959, стр. 74.
2. Илюкович А. "Электрические счетчики. Теория, расчет, конструкции", М., 1963, стр. 166, 167.
3. ГОСТ 6570-75, п. 1.27.
4. 33 Արտոնագիր 33 Ա «Էլեկտրաէներգիայի բաշխիչ չափիչ սարքավորում», օգտակար մոդել:

**ԲԱՐՉՐ ԼԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ 33 6-220 կՎ ԷԼԵԿ-
ՏՐԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ, ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ, ՑԱՆՑԵՐՈՒՄ և
«ԿԱՅԾԱԿ ԲԼՏԻ» ՓԲԸ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԳԻՏԱԴԵՏԱԶՈՏԱԿԱՆ,
ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ և ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ**

*Ս. Կարապետյան, Վ. Կարղազարյան, Գ. Այվազյան
/Կայծակ/ ՓԲԸ*

Հայտնի է, որ 33 էներգետիկայի, Արդյունաբերության և առևտրի նախարարությունների և այլ ծյուղային ձեռնարկությունների 6-220 կՎ էներգաօբյեկտների էլեկտրասարքավորումները /ԷԱ/ ենթարկվում են ամպրոպային, կոմուտացիոն, աղեղային, ֆեռոռեզոնանսային գերլարումների ազդեցությանը: Այդ պատճառով բարձր լարման ԷԱ /ուժային և չափող տրանսֆորմատորների, կաբելների, օդային և յուղային անջատիչների, պտտվող մեքենաների և այլի/ նորմալ շահագործման անհրաժեշտ հուսալիության ապահովման համար, համաձայն համապատասխան նորմատիվների, էլեկտրոլ գերլարման հնարավոր տեսակներից և ԷԱ մեկուսացման ամրությունից մշակվում և շահագործվում են գերլարումներից ԷԱ մեկուսացման պաշտպանության համակարգեր, օգտագործելով պահանջվող պաշտպանիչ և թողունակության պարամետրերով պարպիչներ: Այդ պատճառով, ԷԱ երկարատև 20-40 տարվա աշխատանքի պայմանների լուսաբանումը, նրանց մեկուսացման ծերացման-մաշվածության հետ միասին, հանդիսանում են խիստ առեօրակյան կարևոր անհրաժեշտություն էներգաօբյեկտների շահագործման պահանջվող հուսալիության ապահովման համար: Նամանավանդ, որ այդ պայմաններում ծերացած են նաև թերություններով հայտնի 6-220 կՎ ավանդական փականային պաշտպանիչ պարպիչները և գործում են միայն ամպրոպային գերլարումների ժամանակ: Ոչ պակաս կարևոր հարց է 6-220 կՎ յուղային և օդային անջատիչների երկարատև շահագործումից մաշված, ոչ պատշաճ ձևով ժամանակին չկատարվող պրոֆիլակտիկ փորձարկումները յուղափոխանակումներով, նրանց կոմուտացիայի ընթացքում առաջացնում են անթույլատրելի ինտենսիվ կրկնվող վառքեր /повторные зажигания/ առաջացնելով ավելի մեծ հաճախությամբ և ամպլիտուդով կոմուտացիոն գերլարումներ: Այսպիսով նորմալ աշխատանքի և գերլարումների ժամանակ ծերացած ԷԱ-երի օգտագործման ընթացքում վերջինների վնասվածքների քանակությունը անհամեմատ շատանում է: Այս պայմաններում հատկապես ավելանում է միաֆազ հողակցումների քանակությունը լրացուցիչ ավելացնելով 6-35 կՎ մեկուսացված չեզոքով ցանցերում աղեղային, կոմուտացիոն գերլարումների, իսկ 110-220 կՎ ցանցերում- կոմուտացիոն գերլարումների ազդեցությունը: Նշված պայմաններում բարձրանում է նաև վթարների քանակությունը ամպրոպային գերլարումների ազդեցություններից: Այս իրավիճակում ԷԱ-երի վնասվածքների անալիզը և դասակարգումը

չնայած իր կարևորությանը դառնում է բարդ, պրոբլեմատիկ հարց և միշտ չէ, որ կատարվում է պահանջվող մակարդակով:

Այսպիսով, ներկա պայմաններում 6-220 կՎ էներգաօբյեկտների շահագործման հուսալիության բարձրացման և վթարների նվազեցման համար պահանջվում է էլեկտրոլ ԷԱ մեկուսացման կոորդինացիայի պահանջներից, հարցի որոշման նորովի մոտեցում: Մի կողմից պետք է որոշել սպասելիք ներագող հնարավոր գերլարման տեսակների պարամետրերը, պաշտպանիչ գերլարման սահմանափակիչ /ՕՄԻ/ վրա նրանց էներգետիկ ազդեցությունները, մյուս կողմից ընտրել պահանջվող պայմաններով, նորագույն ցինկ-օքսիդային, միջազգային նորմերին համապատասխան ՕՄԻ-ներ: Տվյալ դեպքում, էլեկտրոլ 33 ծանր փիճակից, բացառվում է նոր ԷԱ երի ձեռք բերումը և առաջ է քաշվում ծերացած ԷԱ-երի շահագործման տևողության երկարացման հարցը:

Էներգաօբյեկտների շահագործման հուսալիության երաշխիք է նաև ԷԱ մեկուսացման երկարատև ծամանակակից անտորոշումները, որտեղ մեկուսացման պարամետրերի /մասնակի պարպումներ, էգծ, և այլն/ ստացված դինամիկ բնութագրերով որոշվում է տվյալ սարքի վերանորոգման կամ փոխման ժամկետը, խուսափելով ծանր վթարներից և ֆինանսական լրացուցիչ ծախսերից: Ընդդրում արտասահմանում նման անտորոշումները լայն կիրառություն են ստացել: Պետք է նշել, որ լրացուցիչ վթարներից խուսափելու համար վերջին ժամանակներում արտասահմանում և ԱՊՀ երկրներում էներգաօբյեկտների հողանցման դիմադրությունների պահանջվելիք փորձաքայմ ծեծությունները խիստ հսկողության տակ են:

«Կայծակ ԲԼՏԻ» ՓԲԸ- հազեցված հզոր լաբորատորիաներով մինչև 3,5 մլն. 4 ինպուլսային և 1,5 մլն. 4 փոփոխական հոսանքի 50 Հց լարումներով, զբաղվում է նշված ԲԼՏ հիմնական հարցերով, տալով գործնական ներդրման առաջարկություններ: Վերջին տարիներում 6-35 կՎ ցանցերում, հոսանք սահմանափակող ռեակտորների առկայության և բացակայության դեպքերում «Կայծակը» մշակել և գործնականապես կիրառում է հատուկ հաշվարկային ծրագրով միաֆազ հողանցումների դեպքում առաջացած աղեղային գերլարումներից ԷԱ մեկուսացման պաշտպանության համակարգեր, նախատեսված նրանցում ցինկօքսիդային ժամանակակից պարպիչներ-սահմանափակիչներ /ՕՄԻ/, էլեկտրոլ տվյալ ցանցի գերլարումը բնութագրող հիմնական A, C, R/ պարամետրերից, օպտիմալ քանակությամբ ընտրված ՕՄԻ-երի վրա ներագող գերլարման էներգետիկ ազդեցություններից: Հիշյալ սահմանափակիչներից «Կայծակը» մշակել և պատրաստել է 6-35 կՎ ՕՄԻ տիպի առանց կայծային միջակայքի, բարելավված մինչև 40% պաշտպանիչ բնութագրերով, չափակշռային պարամետրերով, պարզ կառուցվածքով սահմանափակիչներ, միջազգային նորմերին համապատասխանող, ավելի էժան և նախատեսված մինչև 2500 ծ. մ. ք. շահագործման համար/ վերջինը հրամայական պահանջ է 33 հիմնական, մինչև 92%, բարձրունքային էներգաօբյեկտների համար/ Մշակվել և կարող է պատրաստվել 110-220 կՎ նույնատիպ, միջազգային նորմերին համապատասխան սահմանափակիչներ արտաքին պոլիմերային կամ ծեծնապակյա մեկուսիչներով:

Սկսած 1991թ. աստիճանաբար տեղադրվել են 6-35 կՎ ավելի քան 700 հատ նշված ՕՄԻ տիպի սահմանափակիչներ 33 Հրազդան ՊՇԷԿ-ում, Սպանդարյան ՀԷԿ-ում, ՀԱԷԿ-ում, մի շարք էլեկտրակայան ցանցերում և մի շարք արդյունաբերական ձեռնարկություններում: Այս սահմանափակիչների 3-9 տարվա շահագործման փորձը ցույց է տվել, որ նրանք մեծ նպաստ են բերում 6-35 կՎ ԷԱ վթարների նվազեցմանը, ինչի մասին վկայում են շահագործողների հաստատող փաստացի տվյալները, ապահովելով հարյուր միլիոնավոր դրամի տնտեսում: Անհրաժեշտ է նշել նաև, որ 6-220 կՎ սահմանափակիչները համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններում են ապահովում ԷԱ պաշտպանությունը մթնոլորտային և կոմուտացիոն գերլարումների դեպքում, քանի որ նրանք համեմատաբար փոքր էներգետիկ ազդեցություններ ունեն:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ սահմանափակիչների օգտագործումը, նամանավանդ 110 կՎ և ավելի լարումով, բացի շահագործման հուսալիության բարձրացումից, ապահովում են նաև օդային գծերի և ԷԱ չափակշռային պարամետրերի 30-40% իջեցումը:

Բացի նշվածներից 6-220 կՎ սարքավորումների համար ինստիտուտը մշակում է բարելավված էլեկտրակայան բնութագրերով պոլիմերային նորագույն գծային և հիմնային մեկուսիչներ բարձրացված էլեկտրակայան բնութագրերով, որոնք ավելի բարենպաստ են աշխատում մթնոլորտի կեխտուտ պայմաններում: Միջազգային համագործակցության հետ կապված, ինստիտուտը զբաղվում է նաև մինչև 3000 մ. ծ. մ. շահագործման համար 6-500

կվ էլեկտրասարքերի արտաքին մեկուսացման նորմերի ընտրման մեթոդի, հատուկ ստուգումների մշակմամբ, որոնք նույնպես գործնական կիրառում ունեն էներգաօբյեկտներում և նախագծային ինստիտուտներում:

Ասեմբ, որ 1994-1999թթ. ինստիտուտի կատարած աշխատանքների արդյունքները ներկայացվել են 6 անգամ Մոսկվայում «էլեկտրատեխնիկա 2000» և Երևանում «ՓՅԷԿ-97» միջազգային սիմպոզիումներում, տպագրվել են 17 գիտական հոտվածներ Մոսկվայի և ԳՀ Ազգային Ակադեմիայի կենտրոնական մամուլներում:

Այսպիսով ԳՀ էներգաօբյեկտների արդի վիճակից ելնելով, շահագործման հուսալիությունը պատշաճ վիճակում ապահովելու համար «Կայծակը» էներգաօբյեկտների հետ համագործակցելով կարող է կատարել վերը նշված աշխատանքները, որոնց հետ կապված մշակված է «Կայծակի» գիտահետազոտական և կոնստրուկտորական ներդրման աշխատանքների հեռանկարային ծրագիր:

ՀՈՎԱՑՄԱՆ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՎ ԿԱՅԱՎՈՐՎԱԾ 200ՄԿՏ ԶՁՈՐՈՒԹՅԱՄԲ ԷՆԵՐԳԱԲՆՈՎ ԸՆԿՆԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐԻ ՀԵՏԱՁՈՏՈՒՄԸ
Ո.Սարուխյան, Լ. Չարությունյան

Ինչպես հայտնի է, ՋԷԿ-երի և ԱԷԿ-ների շրջանառության ջրի հովացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տեխնիկական ջրամատակարարման համակարգերում շատ հաճախ կիրառվում են տարբեր տիպի հովացուցիչներով համակցված համակարգեր: Ընդ որում որպես համակցված համակարգ կարելի է դիտարկել զուգահեռ կամ հաջորդաբար միացված կոնդենսատային հովացման տեղակայանքի և ջրա-ջրային ջերմափոխանակիչներով ցայտավազանի հովացման համակարգը:

Այսպիսի համակարգ առաջարկված էր Ռոստովի "Ջերմաէլեկտրաէներգետիկա" և Հունգարական "Էներգետիկայի" ինստիտուտների կողմից Հրազդանի ՊՇԷԿ-ի ընդարձակվող մասի 300 ՄՎտ հզորությամբ էներգաբլոկների օդային կոնդենսատային տեղակայանքի ամառային աշխատանքային ռեժիմի արդյունավետության բարձրացման նպատակով:

Հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ արտադրվող ջերմափոխանակության տեղակայանքների կիրառումը հովացման համակցված համակարգերում հանգեցնում է մեծ թվով ջերմափոխանակիչների տեղակայման անհրաժեշտության և բարդ կառուցվածքային լուծումների, որն ինքստիմայն նվազեցնում է համակարգի շահագործման հուսալիությունը: Անհրաժեշտ է նշել նաև, որ սերիական արտադրության ջրա-ջրային ջերմափոխանակիչները նախատեսված են քիչ այլ պայմանների համար և հովացման համակցված համակարգերում դրանց կիրառման համար անհրաժեշտ է կատարել ապարատի կառուցվածքային որոշակի փոփոխություններ: Ուստի, ջերմափոխանակիչների թվաքանակի կրճատման և ՕԿՏ-ի հետ միացման կառուցվածքային լուծումների պարզեցման նպատակով, հովացման համակցված համակարգի համար առաջարկվել է անհատական 2400-ՏԻ տիպի պատենտավորված կրկնակիացված ջերմափոխանակիչ:

Հովացուցիչների միջև շրջանառության ջրի ծախսի բաշխման լավարկումը պայմանավորված է կոնդենսատորի մուտքում ջրի նվազագույն ջերմաստիճան պահպանելու հանգամանքով: Սակայն, քանի որ այդ ջերմաստիճանը կախված է նաև բնակլիմայական պայմաններից, ուստի ակնհայտ է, որ նշված խնդիրը միանշանակ չէ: Հետևաբար, հովացման համակցված համակարգերի նախագծման ժամանակ անհրաժեշտ է նախատեսել շրջանառության ջրի վերաբաշխման հնարավորությունը ըստ օդերևութաբանական պայմանների շահագործման ընթացքում հովացնող ջրի նվազագույն ջերմաստիճան ապահովելու նպատակով:

Խնդիրը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ տրված բնակլիմայական պայմանների, կոնդենսատորում հովացնող ջրի Δt ջերմաստիճանային տարբերության, ցայտեցման համակարգի փողրակներից առաջ ջրի l ավելցուկային ճնշման դեպքում որոշել շրջանառության ջրի ծախսի բաշխումը հովացուցիչներին, որի դեպքում շրջանառության ջրի ջերմաստիճանը կոնդենսատորից առաջ կլինի նվազագույնը:

Հիմք ընդունելով Հրազդանի ՊՇԷԿ-ի K-200-130 էներգաբլոկների կոնդենսատային


հովացուցիչ տեղակայանքի հաշվարկի մեթոդիկան հովացման համակցված համակարգի հաշվարկի համար մշակվել է համապատասխան հաշվարկային ծրագիր:

Էներգաբլոկների հաշվարկն իրականացված է երկու տարբերակով:
I տարբերակ. էներգաբլոկն աշխատում է «չոր» ռեժիմում, միայն օդային կոնդենսատային տեղակայանքներով,
II տարբերակ. էներգաբլոկն աշխատում է հովացման համակցված համակարգով (օդային կոնդենսատային տեղակայանք և զուգահեռ միացված ջրա-ջրային ջերմափոխանակիչներով ցայտավազան):

Երկու տարբերակների համար հաշվարկները կատարված են.
ա) արտաքին օդի ջերմաստիճանի 20-ից 30°C արժեքների դեպքում,
բ) էներգաբլոկի հզորության տեխնիկական թույլատրելի նվազագույնից մինչև անվանական արժեքների դեպքում,
գ) քամու 0-ից 9 մ/վ արագությունների համար:


II տարբերակի հաշվարկները կատարված են դեպի ջրա-ջրային ջերմափոխանակիչներ ուղղվող շրջանառության ջրի ընդհանուր ծախսի 10-ից 30% արժեքների համար:
Էներգաբլոկի աշխատանքային ռեժիմների հաշվարկների արդյունքներից հետևում է, որ ըստ էներգաբլոկի հզորության, արտաքին օդի ջերմաստիճանի և քամու արագության ջրա-ջրային ջերմափոխանակիչների հովացնող ջրի լավարկված ծախսը կազմում է շրջանառության ջրի ընդհանուր ծախսի 18-ից 22%-ը (ջերմափոխանակիչների հովացման համար ցայտավազանի տեխնիկական ջրի հաստատում ծախսի պայմանների դեպքում):

Նկ 1-ում բերված են ըստ հաշվարկային երկու տարբերակների կոնդենսատորում ճնշումների տարբերության և էներգաբլոկի հզորության նետտո աճի կախվածության գրաֆիկները ջերմափոխանակիչների ջրի ծախսից, օդի ջերմաստիճանի 22°C և քամու արագության 0 մ/վ արժեքների դեպքում:



Նկ. 1
163

Երկու հովազուցիչների միջև շրջանառության ջրի լավարկված բաշխման դեպքում էներգաբալունի անվանական հզորության սահմաափակման ջերմաստիճանը 20.3°C-ից անում է մինչև 25.3°C (նկ. 2):



Նկ. 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՈՒ ՄԻՆԶԵՎ 2010 Թ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱՎԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
Ո.Սարուխյան, Ն.Գրիգորյան, Ա.Չառանցյան

- Ուսումնասիրությունը հանտապնդել է հետևյալ հիմնական նպատակները՝
1. Էներգետիկայի տարբեր աղբյուրների /էլեկտրական, ջերմային, գազ և այլն/ պահանջարկի և սպառման կառուցվածքի կանխատեսում:
 2. Էներգիայի սպառման արդյունավետության ցուցանիշների կանխատեսում:
 3. Էլեկտրական և ջերմային էներգիաների արտադրության կանխատեսում:
 4. Էլեկտրաէներգիայի կանխատեսվող պահանջարկի ապահովման համար անհրաժեշտ արտադրական հզորությունների ծավալի և կառուցվածքի գնահատում և զարգացման իրատեսական տարբերակների մշակում:
 5. Էլեկտրաէներգիայի արտադրության առաջարկվող տարբերակների համար անհրաժեշտ ներդրումների ծավալի և շահագործման ու պահպանման ծախսերի կանխատեսում և գնահատում:
 6. Էներգակիրների ներկրման ծավալների և ծախսերի կանխատեսում:
- Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար կատարվել են հատկապես վերլուծական աշխատանքները՝
- ա) փորձագիտական վերլուծության է ենթարկվել էներգետիկայի տարբեր աղբյուրների սպառման ծավալների և կառուցվածքի վերաբերյալ նախորդող ժամանակաշրջանի պաշտոնական տեղեկատվությունը,
 - բ) պաշտոնական տարբեր աղբյուրների տվյալների, ինչպես նաև առանձին փորձագետների և մասնագետների գնահատականների համեմատական վերլուծության հիման վրա բացահայտվել են բազմաթիվ տվյալների անճշտությունները ու հակասությունները.

գ) մշակվել են կանխատեսումների համար անհրաժեշտ բազմաթիվ ճշգրտված տվյալներ, որոնք որոշ դեպքերում, զգալիորեն տարբերվում են պաշտոնական տվյալներից,

դ) փորձագիտական վերլուծության և գնահատման են ենթարկվել էլեկտրաէներգիա արտադրող կայանների հետագա շահագործման հնարավորությունները (հետագա ծառայության ժամկետները) և դրա համար անհրաժեշտ նվազագույն ներդրումների պահանջը,

ե) մշակվել են տնտեսական աճի տարբեր սցենարներ, որոնք հիմք են ծառայել էներգետիկայի սպառման կանխատեսումների համար:

ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՔՍԵՐԳԻԱՆ
Ա.Մխիթարյան

1. Էներգիայի փոխակերպման արդյունավետությունը որոշելու և էներգիայի որակը գնահատելու համար այժմ հաճախ օգտագործում են նաև էքսերգիա թերմոդինամիկական (բնութագրական) ֆունկցիան E_x , (տեսակարար մեծությունը e_x): Այն հաճախ կոչվում է նաև տեխնիկական աշխատունակություն և չափվում է էներգիայի այն մասով, որը կարող է փոխակերպվել (էներգիայի մնացած մասը, որը տվյալ պայմաններում համարվում է արժեքազրկված, կոչվում է աներգիա A): Այսպիսով.

$$\Theta = E_x + A \dots (1)$$

2. էքսերգիան միաժամանակ ծառայում է պրոցեսների անհակադարձելիության հետևանքով տեղի ունեցող կորուստների անմիջական չափանիշը: Դիտարկելով մեկուսացված համակարգի արտաքին օգտակար աշխատանքը թերմոդինամիկայի առաջին և երկրորդ օրենքների հիման վրա, ստանում ենք.

$$l' = i - i_0 - T_0(S - S_0) - T_0 \Delta S^* \dots (2)$$

որտեղ i և S -ը 1 կգ մարմնի սկզբնական էնթալպիան է և էնտրոպիան է, i_0 և S_0 -նույն մեծություններն են միջավայրի համար, կՁ/կգ, ΔS^* -էնտրոպիայի փոփոխությունն է համակարգի համար, որը և բնութագրում է պրոցեսների անհակադարձելիության աստիճանը:

Այսպիսով, $T_0 \Delta S^*$ մեծության չափով նվազում է համակարգից սպասվող առավելագույն աշխատանքը (Գյու-Ստոդոլի թեորեմ): Առավելագույն տեսակարար արտաքին աշխատանքի, այսինքն էքսերգիայի համար կարելի է գրել.

$$l'_{\text{տն}} = l_x = i - i_0 - T_0(S - S_0) \dots (3)$$


3. էքսերգիային կարելի է տալ նաև գրաֆիկական մեկնաբանություն: էքսերգետիկական դիագրամները օգտագործվում են ջերմային մեքենաների թերմոդինամիկական վերլուծությունն իրականացնելու համար:

4. էքսերգետիկական ՕԳԳ-ն կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$\eta_{\text{ex}} = \frac{\sum e_x^-}{\sum e_x^+} = \frac{\sum e_x^+ - D}{\sum e_x^+} \dots (4)$$

որտեղ $\sum e_x^+$ և $\sum e_x^-$ համապատասխանաբար պրոցեսի սկզբում և վերջում համակարգի (կամ նրան հաղորդված և նրանից անջատված) էքսերգիաներն են, իսկ D -ն կորուստները, որոնք հավասար են

$$D = \Delta e_x = \sum e_x^+ - \sum e_x^- = T_0 \Delta S^* \dots (5)$$



Այսպիսով, ի տարբերություն էներգիայի, էքսերգիան կախված է ինչպես համակարգի, նույնպես և միջավայրի պարամետրերից: Ի տարբերություն ջերմային ՕԳԳ-ի, այն կարող է հավասարվել և 1-ի:

5. Ցանկացած տեսակի էներգիայի համար

$$e_x = \omega \cdot \Theta \dots \quad (6)$$

որտեղ ω -ն աշխատունակության գործակիցն է:

Մեխանիկական և էլեկտրական էներգիաների համար $\omega = 1$, իսկ ջերմության համար այն կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

